



ԳԵՐՊԵՆ. ՊԵՏՐՈՍ ԱՐԲՊ. ՔԵՏԻՃԵԱՆ

մէնուն համակրանքը և ամէնուն հանդէպ
ցոյց տուած է հայրական դուրգուրոտ
ինամբ մը, որուն շատեր դեռ մինչեւ օրս
երախտապարտ են:

1936ին կ'անուանուի Պատրիարքական
Փոխանորդ: Նոյն տարուան Նոյեմբերին
տեղի կ'ունենայ եպիսկոպոսական օծումը
մեծ շուքով Պէյրուսի մէջ: Այնուհետեւ
եռանդով կը նուիրուի Պատրիարքական
գործերուն, որոնց համար ունէր թէ՛ մեծ
պատրաստութիւն և թէ՛ պահանջուած բո-
լոր ձիրքերը:

1937ին կը վախճանէր Ամեն. Արքիա-
րեան Կաթողիկոս: Քիչ վերջ Պատրիար-
քական աթոռը կը բարձրանար Ամեն.

Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճան-
եան, ապագայ Ծիրանաւորը: Ու
Քէտիճեան Գերապայծառ կը մը-
նայ իր Փոխանորդական բարձր
պաշտօնին մէջ: Ութը տարի շա-
րունակ թանկաւերն աջակիցը
կ'ըլլայ Ամեն. Կաթողիկոսին և
սիրուած ու փնտռուած դէմք մը
ամբողջ Պէյրուսի մէջ: Դժբախ-
տաբար անողոք հիւանդութիւնը,
սրտի տկարութիւնը տակաւ կը
սկսի յայտնուիլ:

1945ին կը ստիպուի թողուլ
Պէյրուսը և հրաժարիլ իր պաշ-
տօնէն: Կ'անցնի Հռոմ և հոն կը
ստանձնէ Քէնյայ. Լեւոնեան Հայ
Կղերանոցի Մեծաւորութիւնը,
միաժամանակ նշանակուելով
Ձեռնադրիչ Եպիսկոպոս Հայ Ժէ-
սի: Արեւելեան Ս. Ժողովը բարձր
զնահատանքով զինք կ'անուանէ
նաեւ խորհրդական. միաժամա-
նակ կը վարէ նաեւ Պատրիարքա-
կան Գործակալի փափուկ պաշ-
տօնը, մինչեւ մահը:

Գերպոյ. Քէտիճեան սիրոյ կա-
պերով զօդուած էր նաեւ Միա-
բանութեան: 1939ին և 1951ին
ձեռնադրած էր մեր Ուխտի Հայ-
րերը. 1951ին մասնակցած էր

Միխիթար Արքահօր մահուան երկրորդ
գարադարձի հանդէսներուն: 1951ին նա-
խագահած էր Վանքիս Հիմնարկութեան
տօնակատարութեանց:

Իր հայրական բարի սիրտը անշուշտ
հիմա երկնքէն աւելի ևս պիտի փութայ
օթանդակելու իր տառապեալ ազգակից-
ներուն. և իր բարեխօսութիւնը պիտի
տարածէ բոլորին վրայ, Հայ Կաթո-
ղիկէ Նուիրապետութեան ամէն մէկ ան-
դամին համար հայցելով Ամենակալէն ա-
ռատազեղ շնորհքներ:

Օրհնեալ ըլլայ իր անոյշ յիշատակը:

Հ. Ն. Տ.

ԱՌԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

« Հո՛վ արե՛ք, սարե՛ր ջան, հո՛վ արե՛ք,
իմ դարդիս դարման արե՛ք... »:

Մեծ է դարդը Հայոց աշխարհի. լուե՛ր
է քնարը Հայոց դարդի մեծ երգիչին.
վշտի ու ցաւի աննման վարպետին: Եւ հի-
մա ո՞վ պիտի դայ անոյշ բալասանը դնե-
լու մեր մեծ վէրքին.

« Դարդս լացե՛ք, սարի սմբուլ,
Ալւան-ալւան ծաղիկներ.
Դարդս լացե՛ք, բաղի բլբուլ,
Ամպշոյ երկնոց գով հովեր »:

Աւետիք Իսահակեանով կ'անհետանայ
ահաւաստիկ հայ քնարին պայծառ երրոր-
դութեան ներհուն և խոհուն վարպետը,
Յովհաննէս Յովհաննէսեանի և Թումա-
նեանի սերունդէն, յաջորդէն Աղայեանի և
ընկեր Դեմիրճեաններու և Տէրեաններու:

« Էյ, Մանթաշի նաշխուն հաւքեր,
իմ դարդը որ ձերն եղնէր,
Ձեր էդ գառ-վառ խառ փետուրներ
կը սեւնային քանց գիշեր »:

Էյ, Մանթաշի մարմանդ հովեր,
իմ դարդը որ ձերն եղնէր,
Ձեր նուշ-անոյշ ծաղկանց հոտը,
Թոյն ու տօքի կը փոխէր... »:

Աւելի քան ութսունամեայ էր ան և ա-
լետը նահապետի մը նման, հին օրերու
իրեւ կենսուրախ աշուղ՝ իր շուրջ խմ-
բած էր հոյլ մը բանաստեղծներու, որոնց
բանքն իր անսպառ աղբիւր էր ան, ար-
շալոյսի մը պէս չքնաղ, որ կարծես պիտի
չունենար իր վերջալոյսը:

« Տիեզերքի պերճ հիւսուածքն » էր ան,
և « իր մէջ երկինքն էր երգում »: Ու դեռ
պիտի երգէ. պիտի երգէ յաւէտ. այո՛,
ինք « հիմա այնպէս յողնած է ու լուռ,
բայց յաւերժ կ'երգէ Հայրենի աղբիւր »:
Կ'երգէ սէրը ասպետին, սէրն յաւերժա-



կան. կ'երգէ նաեւ Արու Լալա Մահարին
մեռելական:

Հոկտեմբեր 17ին, մինչ Երեւանի ձայ-
նասփիւռը կը հաղորդէր տխուր լուրն աշ-
խարհի, կ'իրականանար սիրոյ ասպետին
երազը չքնաղ.

« Եւ քեւ առան, քոսն օրեր ու տարիք,
վառ կտրիմը դարձաւ դողող մի ծերուկ.
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցէն վարդը խաւրած ու դալուկ:
Սիրու վարդը աչքին դրեց փափաքով,
Ու համբուրեց վերջին անգամ, ու մեռաւ՝
Հոգին լցած բլբուլների երգերով »:

Արեքսանդրապոլի գաւակ էր ան, ծնած
Հազարապատ գիւղը, այժմ Իսահակեան,
1875ին: Գրադէտ կնոջ մը մօտ կը սորվի
այրուրեքներ. կը յաճախէ ծխական դպրոց
և հուսկ Արեքսանդրապոլի պետական
վարժարանը:

Հաղիւ տասներկու տարեկան, յափըջ-տակութեամբ կը կարդայ Պոռչեանի գործերը. Գասախի ափին, Աշտարակի կաթարդական այգիներուն մէջ կը զինովնայ հայրենի Մուսաներու դիմանքով:

1889-91, Գէորգեան ձեմարանի աշակերտ, կը ծծէ Արմենի, Բաֆֆի, Աղայեանի, Նարգոսի ոգեւորիչ խանդը: Այդ շրջանին արդէն կը յայտնուի իր մէջ բանաստեղծը, որ իր ներշնչումը կ'ընդունի բնութենէն, հայրենի երկրին սքանչելի լեռներէն ու դաշտերէն: Անկեղծ է իր երգը մանկական:

« Ծաղիկ էր նորաբողոք,
Սարի լանջում, երկնի տակ.
Ինձ կը դիպէր առի խոխոջ
Ինձ կ'ողջունէր արեգակ:

Գիշերները աստղ ու լուսին
Վար կ'իջնէին երկնիցէն,
Ու հեքեքներ ինձ ասէին
Կախարդական, ոսկեղէն »:

Ուսման անհուն տենչով վառ, պատանի բանաստեղծը կը յաջողի անցնիլ Եւրոպա, ուր կը մնայ 1893-95: Վիեննա, Լայպցիկ կը դիմեն զինքը. իբրեւ համալսարանական ազատ ունկնդիր՝ կը հետեւի գրականութեան, փիլիսոփայութեան եւ ազգաբանական դասընթացներու: Կը կարդայ մանաւանդ Կէօթէ, Հայնէ, Պայրըն, Շէքսպիր, Նիցչէ եւ Շոփէնհաուէր:

1895-97, հաղիւ Հայաստան վերադարձած, ցարական բռնատիրութեան հալածանքներուն տակ՝ երկու տարի բանտարկուած կը մնայ, կարգ մը ուրիշ մտաւորականներու հետ:

1898ին լոյս կը տեսնէ իր բանաստեղծութիւններու անդրանիկ հատորը. նրգեր ու վերքեր: Մեծ է արդէն ժողովրդականութիւնը բանաստեղծին: Բայց երգին հետ վէրքն ալ անպակաս չ'ըլլար. եւ նոյն տարին իսկ կ'աքսորուի Օտեսոս, Շիրվան-գաղէի հետ:

1889ին զինք կը գտնենք Ռոստով, Նա-

խիջեալ: 1900ին, կարճ շրջանի մը համար դարձեալ կու գայ Եւրոպա:

1901-2 կը թափառի Էջմիածին, Վաղարշապատ, ու դարձեալ Եւրոպա, այս անգամ Վենետիկ: 1903ին դարձեալ հայրենիք է վերադարձած: Նոյն տարին իրեն կը հանդիպին Եւրոպա, Ռուսաստան եւ Կովկաս, ուր աւելի խորէն կ'ուսումնասիրէ ժողովուրդներու կենցաղն ու բարքերը: 1904ին Մոսկուա կը գտնուի, Վահան Տէրեանի հետ: 1905-8 կը շրջի Ախալքալաք, Թիֆլիս, Բազում:

1908ին արդէն լոյս կը տեսնէ իր երգերուն աւելի կատարեալ հաւաքածոն: Այդ տարին դարձեալ կը զօրանայ ցարական հալածանքը եւ Բնահալեան, Աղայեանի, Թումանեանի եւ Մալխասեանի հետ կը տառապի Թիֆլիսի մոռյլ բանտին մէջ, ամբողջ տարի մը:

1909ին, կ'անցնի Երեւան. եւ ապա իր ծննդավայրին մէջ կը յօրինէ Աբու Լալա Մահարին, գրուած կապարէ տպաւորութիւններու եւ յոռետեսութեան թախծոտ երկերի մը տակ:

1911ին կը փախչի դէպի Թուրքիա. Պոլսոյ մէջ լոյս կը տեսնէ Աբու Լալա Մահարին. կը գրէ ուրիշ բանաստեղծութիւններ եւ կ'անցնի Եւրոպա: Մինչեւ 1926 կը գեղերի զանազան քաղաքներ՝ Ժընեւ, Վիեննա, Յիւրիկ, Փարիզ եւ հուսկ Վենետիկ: 1920ին, Պոսթոնի մէջ, լոյս կը տեսնէ իր Հայրենի աղբիւրից հատորը. 1922ին, Պոլսոյ մէջ, իր Արմալ էջերը. 1922ին, Վիեննայի Միլիթարեան տպարանէն, Սասմայ Միքըր. 1923ին, Ս. Ղազարու տպարանէն, Աշնան Ծաղիկները:

1926ին դարձեալ կ'անցնի Հայաստան, ուր կը գտնէ իր քաղաքակիցները, իր ուսուցիչը, Յովհաննէս Յովհաննէսեանը: Երեւանի մէջ, կարգ մը ուրիշ հրատարակութիւններէ վերջ, 1930ին լոյս կը տեսնէ իր բանաստեղծութիւններու ժողովածուն:

1930ին դարձեալ կ'անցնի Եւրոպա, կառավարական պաշտօնով, եւ կը բնակի

Փարիզ. հոն դարձեալ կը սկսի մտերմութիւնը Միլիթարեան Հայրենուն, մանաւանդ իր հայրենակից վարդապետներուն հետ:

1936ի աշնան վերջնականապէս կը փոխադրուի Հայրենիք, հրաժեշտի ողջոյնն առնելով Ս. Ղազարէն:

Սովետական Հայաստանի մէջ այնուհետեւ ապրեցաւ ժողովրդական համբաւով ու պատիւներով. անուանուեցաւ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ, Գրողների Միութեան Նախագահ, Էջմիածնի Գերադոյն Խորհուրդի անդամ: Յաճախակի լոյս տեսան իր նոր երկերն ու հիւներուն ժողովածոները: 1951ին լրացաւ անոնց քառահատոր հրատարակութիւնը: Ծննդեան ութսունամեակին առթիւ՝ լոյս տեսաւ ուրիշ ժողովածոյ մը, միահատոր, 400 էջոց, մեծադիր եւ գեղակազմ: Օրինակ մը ստացանք նոյն ինքն հեղինակէն, նախ մը ստացանք նոյն ինքն հեղինակէն, որ բաղմամբայ լուրթենէ մը վերջ՝ սիրալիր ողջոյն մը կ'ուղղէր Ս. Ղազարին: Ահա իր սողերը, զրբին ճակատին դրոշմուած:

Պատկառելի Միլիթարեան Ուլտի Գրադարանին, ի յիշատակ Ս. Ղազարում անցուցած ներշնչող եւ անմոռաց օրերի եւ պահերի. խորին սիրով եւ յարգանքով, Աւետիք Խաչակեան: 12. XI. 1955 թ. Երեւան:

Շատ էին իր կապերը Ս. Ղազարի հետ: Կը յիշեմ զինքը, 1936ին, վերջնականապէս Հայաստան երթալու նախօրեակին. Վենետիկ եկած էր, եւ ատէպ կու գար Ս. Ղազար. կը մնար երկար. ներկայ կ'ըլլար մեր ամենօրեայ երկայն ժամերգութիւններուն. եւ անոնցմէ վերջ, մասնաւորապէս երեկոյեան ժամերգութենէն վերջ, մինչ վարդապետները կէս ժամու չափ տակաւին կը մնային տաճարին մէջ, հոգեկան խորհրդածութիւններու պահեր անցընելու, Իսահակեանն ալ կը մնար լուռ:

ու խոհուն, այն կայծկլտող կանթեղին գլխաց, որ միակ ճրագն էր վառ: Հետաքրքիր էինք թէ ինչ կը խորհէր բանաստեղծը: « Եթէ Հայուն սիրտը պեղէք, կը պատասխանէր ան, անոր խորքին մէջ հաւատք կը գտնէք »: Ու մեկնեցաւ Հայաստան, ուր իր պաշտելի Մասիսը կար կանդուն: Նայեցաւ անշուշտ հոն, նայեցաւ հաւատքով Մասիսի արեւմտ դադաթին. նայեցաւ... եւ իր հերթին՝ ինքն ալ ահա անցաւ:

Մահուան առթիւ այս քանի մը խորհրդածութիւնները եւ կենսագրական յուշերու վերաբարձրածումը չեն թողաւորեր մեզի երկարօրէն վերլուծելու Իսահակեանի գործը, որ արդէն խօսու է երեսուն տարիէ ի վեր:

Աբու Լալա Մահարին թարգմանուած է 12 լեզուներու, մինչեւ իսկ ճափոներէն, երաբայէնի եւ էսպերանտոյի:

Իսկ իր ոտանաւորներէն 60ի չափ ձայնագրուած են մեծանուն երաժիշտներէ, եւ արդէն իսկ երկար ժամանակէ ի վեր ժողովուրդին շրթներուն վրայ են:

Մենք կու գանք յարգանքի տուրքը ձոնելու անոր խոնջ նշխարներուն, եւ խոր վիշտով համակուած՝ ծաղիկներ տնկելու անոր թարմ գերեզմանին վրայ. որ անշուշտ լուռ ու խոնարհ, բայց յաւէտ խօսուն է, ինչպէս ինք իր կենդանութեան:

Աշունի, վաթի, ցաւի ու մահուան երգին էր ան: Անձնական, հայրենական ու տիեզերական վշտի եւ աշունի երգիչը, որ այս աշնան հետ հեռացաւ աշխարհէն:

Յուսանք թէ իրմով եւ իր շունչով նոր ծաղիկներ կը բացուին ամէն գարնան հետ ու կ'իրականացնեն իր բաղձանքները հիւսրեայ:

Ու շիրմիս վրէժն կը բացվին նորէն
Ծաղկունքը գարնան...:

Հ. Ն.